

ԵՎՐԱԽՆՏԵԳՈՒՄ

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ ՃԱՆԱԶՎԵՑ

Հունիսի 23-24-ին Բրյուսելում, փակ դռների ետևում, անցկացվեց եվրամիության անդամ երկրների ղեկավարների հանդիպումը, որտեղ քննարկվեց եվրահամաձայնագրի և եվրախորհրդարանի հանձնարարականը՝ Վրաստանին եվրոպական հեռանկարի, իսկ Ուկրաինային ու Մոլդովային՝ եվրամիության անդամության թեկնածուի կարգավիճակի հանձնման հարցը:

Հանդիպմանը հաջորդած հրավիրված մամուլի ասուլիսում եվրահամաձայնագրի մախազահ Ուրսուլա Ֆոն Լեյնը, եվրախորհրդի մախազահ Շառլ Միշելը ու Ֆրանսիայի մախազահ Էմանուել Մակրոնը հայտնեցին, որ եվրախորհրդի անդամ երկրների ղեկավարները հավանություն են տվել եվրահամաձայնագրի և եվրախորհրդարանի հանձնարարականին և Վրաստանին շնորհել են եվրոպական հեռանկարի, իսկ Ուկրաինային ու Մոլդովային՝ եվրամիության անդամության թեկնածուի կարգավիճակ:

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԱՄԵՆ ԻՆՉ ԿԱՆԵՔ, ՈՐ ՕՐ ԱՌԱՋ ՍՏԱՆԱՔ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ»



Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, արձագանքելով եվրամիության անդամ երկրների ղեկավարների Վրաստանի եվրոպական հեռանկարի ճանաչման մասին որոշմանը, հայտարարեց, որ սա պատմական օր է Վրաստանի համար, մենք պատրաստ ենք իրականացնել բոլոր առաջնահերթությունները, որպեսզի օր առաջ ստանանք կարգավիճակ, շնորհավորում են Ուկրաինային և Մոլդովային:

- Սա, անկասկած, պատմական օր է Վրաստանի համար: Եվրամիության խորհուրդը Վրաստանին եվրոպական հեռանկար է տվել: Մենք պատրաստ ենք իրականացնել բոլոր առաջնահերթությունները, որպեսզի շուտով ստանանք թեկնածուի կարգավիճակ,- հայտարարեց վարչապետը:

ՍԱԼՈՍԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ՄԵՔ ԴՍՏՐԱՍՏ ԵՆՔ ԿԱՏԱՐԵԼ ՆԵՐԿԱՅԱՅՎԱԾ ԴԱՅՄԱՆՆԵՐԸ»



Ողջունելով եվրամիության անդամ երկրների ղեկավարների՝ Վրաստանին եվրոպական հեռանկարի ճանաչման մասին ընդունած որոշումը, Վրաստանի մախազահ Սալոսե Զուրաբիշվիլին հայտարարեց, որ Վրաստանի եվրոպական հեռանկարը ճանաչված է, մենք պատրաստ ենք մոտակա ամիսներին աշխատել թեկնածուի կարգավիճակ ստանալու համար:

- Իրոք, պատմական օր է Վրաստանի համար: Եվրամիությունը ճանաչեց Վրաստանի եվրոպական հեռանկարը: Մենք տրամադրված ենք կատարել բոլոր առաջնահերթությունները, անդամակցության կարգավիճակի ստացման համար,- նշեց մախազահը:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ. ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ «ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԻ ՀԱՐՅՈՎ ԵՎՐԱՀԱՆՁՆԱԾՈՂՈՎԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԸ ԿԱՐԵՎՈՐ ԶԵՌՔԲԵՐՈՒՄ Է»

Հունիսի 22-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, կառավարության գործունեության ծրագրի վերաբերյալ ամենամյա լուսնների շրջանակներում, երկրի խորհրդարանում հանդես եկավ ամփոփիչ խոսքով:

Դեռևս մեկ շաբաթ առաջ խորհրդարանին վարչապետի ներկայացրած հաշվետվության կապակցությամբ՝ խորհրդարանական մեծամասնության և փոքրամասնության միջև լուրջ տարաձայնություններ էին ծագել, ինչն էլ իր դրսևորումը գտավ հունիսի 22-ի աղմկահարույց լիազուժար

նիստում:

Ըստ Իրակլի Դարիբաշվիլու՝ Եվրահամաձայնագրի աջակցությունը Վրաստանի եվրոպական հեռանկարին, կառավարության կարելու ձեռքբերումն է և «պատմական որոշում է», թեև կառավարությունը ակնկալում էր, որ երկիրը կստանա թեկնածուի կարգավիճակ: Ինչպես նշեց վարչապետը, Ուկրաինային և Մոլդովային՝ որպես յուրօրինակ խրատաման մեխանիզմի և դրդապատճառի, բոնուսի կարգավիճակ են տալիս, իսկ հետո ասում են վերապահումներ անել, իսկ Վրաստանի դեպքում հակառակն է, ինչը հիասթափեցնող է:

Վարչապետի խոսքով, թեկնածուի կարգավիճակի չհանձնման պատճառներից մեկը երկրում քաղաքական բեռնացումն է: Իրակլի (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

Գեղեցիկ և հարգալից քննարկում, աշխատանքային այցի շրջանակներում, Հայաստանի Դիլիջան քաղաքում հանդիպում ունեցավ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԴԻԼԻՋԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼՈՒ ԵՎ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Հունիսի 18-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, աշխատանքային այցի շրջանակներում, Հայաստանի Դիլիջան քաղաքում հանդիպում ունեցավ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ:



Հանդիպմանը երկու երկրների կառավարությունների ղեկավարները նշեցին, որ բարձրաստիճան ինտենսիվ շփումները վկայում են վրաց-հայկական հարաբերությունների դինամիկ զարգացման ու քաղաքական երկխոսության բարձր մակարդակի մասին:

Զրուցակիցները քննարկեցին Վրաստան-Հայաստան համագործակցության օրակարգային հարցերն ու հեռանկարները: Ստեբեր փոխանակեցին տարածաշրջանային իրավիճակի և զարգացումների շուրջ: Կողմերը վերահաստատել են բարեկամական կապերը հետեւողականորեն խորացնելու պատրաստակամությունը և պայմանավորվեցին շարունակել ակտիվ երկխոսությունը:

ՀԱՆՐԱՅՎԱՔ

«ՏՈՒՆ` ԴԵՊԻ ԵՎՐՈՊԱ». ԵՎՐԱԽՆՏԵԳՐՄԱՆ ԿՈՒՐՍԻ ԱԿՆՀԱՅՏ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 20-ին Թբիլիսիում, Ռուսթավելու պողոտայում, խորհրդարանի շենքի դիմաց, «Սիրցխվիլիա» («Ամոթ է») քաղաքացիական շարժման նախաձեռնությամբ, անցկացվեց բազմամարդ հանրահավաք:

Կազմակերպիչների հայտարարությամբ, հանրահավաքն ուղղված էր ողջ աշխարհին ցուցադրելու եվրախորհրդի անդամ երկրների վրաստանի հավատարմությունը, եւս մեկ անգամ վերահաստատելու եվրամիությանն անդամակցելու Կրաստանի ցանկությունը (Շարունակությունը՝ 4-րդ էջում)



ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «2008 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՇԽԱՐՀԸ ՀԱՄԱՐԺԷ ԶԱՐՁԱԿԱՆՔԵՑ ՈՒՄԱՍՏԱՆԻ ՆԵՐԽՈՒԺՄԱՆ ՓԱՍՏԻՆ»

Հունիսի 21-ին, ամենամյա տնտեսական համաժողովի աշխատանքին մասնակցելու նպատակով, Քաթարում գտնվող Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, համաժողովի պանելային քննարկմանը, մանրամասն խոսեց ռուս-ուկրաինական պատերազմի արդյունքում Վրաստանի առջև ծառայած մարտահրավերների, այդ ենթատեքստում Վրաստանի կառավարության կողմից իրականացվող քաղաքականության մասին:

- Ես՝ որպես կառավարության ղեկավար, պարտավոր եմ մտածել ժողովրդի անվտանգության մասին, քաղաքականապես մենք միջազգային հանրության կողմին ենք, լիովին համակարգված ենք ամերիկյան և եվրոպացի գործընկերների հետ, սակայն հայտարարել ենք, որ մենք՝ վրացիներս, չենք կարող Ռուսաստանի դեմ ազգային տնտեսական պատժամիջոցներ սահմանել և շատ հասկանալի պատճառներով. քանի որ մենք ունենք մեր ազգային շահերը, անվտանգության և տնտեսական մարտահրավերները, սկզբունքորեն սա է մեր մոտիվացիան: Վրաստանը միակ երկիրը չէ, որը Ռուսաստանի դեմ ազգային տնտեսական պատժամիջոցներ չի կիրառել՝ երկրի խոցելիության պատճառով: Աշխարհում շատ երկրներ չեն գտնի, որոնք օկուպացված են Ռուսաստանի կողմից, եւ, հաշվի առնելով մեր աշխարհագրությունը, հեշտությամբ կհասկանաք, թե որտեղ ենք գտնվում,- հայտարարեց

Վրաստանի վարչապետը և հավելեց, որ 2008 թվականին աշխարհում ոչ ոք բավականաչափ ուշադրություն չդարձրեց այն փաստին, որ Վրաստանը դարձավ ռուսական ներխուժման գոհ, օկուպացրեց երկրի 20 տոկոսը, մինչդեռ աշխարհն ունեցավ համարժեք, ճիշտ արձագանք: Միաժամանակ, ինչպես նշեց կառավարության ղեկավարը, աշխարհը զարմացավ 2014 թվականին, երբ բոլորը տեսան Դրիմի բռնակցումը:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ. ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԻ ՀԱՐՅՈՎ ԵՎՐԱԶԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԸ ԿԱՐԵՎՈՐ ՁԵՌՔԵՐՈՒՄ Է»

(Սկզբը՝ 1-ին էջում)

Լի Ղարիբաշվիլին նշեց, ներկա դրությամբ կառավարությունը չի կարող վստահեցնել, որ կկարողանա վերջ դնել քաղաքական բեռնաջանմանը, քանի որ կան խանգարող համապատասխաններ:

- Հենց եվրոպացիները որոշումը կայացվի, եւ նրանք հաստատեն Եվրահանձնաժողովի առաջարկությունները, մենք ոչ մի օր չենք կորցնի: Մենք կշարունակենք իրականացնել այդ բարեփոխումները՝ համագիտ, հաստատական, հետեւողական: Իհարկե, մենք, ցավոք, չենք հաղորդում, որ կկարողանանք վերջ դնել բեռնաջանմանը: Մենք տեսնում ենք, որ այդ մարդիկ ամեն ինչ անում են երկրում քառու, ապակայունացում եւ բեռնաջանում ստեղծելու: Ոչ մեկիս դուր չի գալիս, եւ մենք իսկապես ուզում ենք վերջ տալ այս բեռնաջանմանը, բայց ինչպես կարող ենք դա անել այս մարդկանց պայմաններում, եւ չեմ պատկերացնում,- ասաց Իրակլի Ղարիբաշվիլին:

Վարչապետն իր ամփոփիչ խոսքում անդրադարձավ նաեւ վերջին 10 տարիների ընթացքում երկրում իրականացված բարեփոխումներին, միջազգային հանրության կողմից ճանաչված առաջընթացին, մարդու իրավունքների պաշտպանության, բիզնեսի համար բարենպաստ մթնոլորտի ստեղծման, տնտեսական ներուժի առավել օգտագործման հեռանկարներին:


- Դիտողություն եմ լսել, որ պետք է մարդկանց հետ խոսել այն մասին, թե ինչ ենք արել տասը տարի: Իհարկե, մենք դիտողության հեղինակներին եւ մեր սիրելի ժողովրդին կհիշեցնենք, թե ինչ ենք արել վերջին տասը տարիների ընթացքում, բայց, իհարկե, միաժամանակ ուզում եմ նորից հիշեցնել ժողովրդին, մեր գործընկերներին ու արտաքին ընկերներին, որ մենք իսկապես ժառանգել ենք ամենածանր իրավիճակը: Պարզից էլ պարզ էր, որ երկրում ժողովրդավարության նշույլ չկար: Երկրում իրական, ուժեղ ընդդիմադիր ալիք չկար,

եւ այսօր հենց նման իրավիճակ ստեղծվեց մարդիկ կարող են գալիս եւ մեզ հետ խոսում ազատ լրատվամիջոցների մասին: Մեր որդեգրած բարեփոխումների արդյունքում այսօր տասը աշխատանքային օրում ցանկացած հեռուտարընկերություն կարող է բացվել: Այս ցուցանիշով մենք շատ առաջ ենք,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Նշեց, որ վարչապետի ամփոփիչ ելույթի հենց սկզբում ակնհայտ դարձավ, որ ընդդիմությունը, մասնավորապես, «Միասնական ազգային շարժման» ներկայացուցիչները, ծրագրում էին հնարավոր ամեն ինչ անել լիազուրկ միստի աշխատանքի խաթարման համար: Ինչպես վարչապետի ելույթի ժամանակ, այնպես էլ կառավարության հաշվետվության քննարկմանը, Եվրամիության թեկնածուի կարգավիճակի չհամաձայնեցնելու պատասխանատվությունը ընդդիմությունը վերագրում էր կառավարող թիմին:



Իր հերթին, խորհրդարանի մեծամասնությունը ներկայացնող պատգամավորները (մասնավորապես՝ Իրակլի Կոբախիձեն, Շավաթա Քալանթարյան, Մամուկա Մոկնաբաձեն, Գիա Վուլսկին եւ ուրիշներ) կոնկրետ փաստեր ներկայացրին «Ազգայնականների» կողմից կարգավիճակի համաձայնեցնելու նպատակով իրականացված քայլերի մասին:



ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ ՏԱՐԵՎԱՆ ԳՆԱՃԸ ՀԱՍԵՒ Է 40 ՏԱՐՎԱ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆԻՆ

Մեծ Բրիտանիայում տարեկան գնաճը, մայիս ամսվա արդյունքներով, արագացել է՝ հասնելով 1982 թվականից ի վեր, ռեկորդային մակարդակի՝ 9,1 տոկոսի նախորդ ամսվա 9 տոկոսից:

Ապրիլին 2,5 տոկոսով գնաճը մայիսին կազմել է 0,7 տոկոս: Ամսական արտահայտությամբ սպասվում էր սպառողական գների 0,6 տոկոսով աճ, հաղորդել է ՌԻԱ Նոլլոստին:

ՖՐԱՆՍԻԱ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՐԱԿԱՆԸ ՉԸՆԴՈՒՆՎԵՑ

Ֆրանսիայի վարչապետ Էլիզաբետ Բորնը նախագահ Էմանուել Մակրոնին է ներկայացրել նախարարների կաբինետի հրաժարականի խնդրագիրը, որը մերժվել է:

Ինչպես նշել են Մակրոնի վարչակազմում. «պետության ղեկավարն ակնկալում է, որ կառավարությունը կշարունակի կատարել իր առաքելությունը: Ելիսենկյան պալատի ներկայացուցիչների խոսքով՝ նախագահը «մտադիր է կառուցողական լուծումներ որոնել» խորհրդարանում ներկայացված քաղաքական կուսակցությունների ղեկավարների հետ հանդիպումներում:

Կառավարության հրաժարականի խնդրագիրը տրվել է հունիսի 19-ին ավարտված խորհրդարանական ընտրությունների արդյունքների պատճառով: Դրանց արդյունքներով կառավարող դաշինքն Ազգային ժողովում (խորհրդարանի ստորին պալատ) կորցրել է մանդատների հուսալի մեծամասնությունը:

ԳԵՐՄԱՆԻԱ ԿԱՏԵՂԾՎԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՄԵՆԱՄԵԾ ԲԱՆԱԿԸ

Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցը հայտարարեց, որ Բունդեսվերը շուտով կծեւավորի ՆԱՏՕ-ի եվրոպական երկրների մեջ ամենամեծ բանակը:

- Փետրվարի վերջին ես հայտարարեցի Բունդեսվերի համար 100 միլիարդ եվրոյի չափով հատուկ հիմնադրամի ստեղծման մասին,- ասաց Շոլցը՝ հավելելով, որ որոշ ժամանակ անց Բունդեսբազն ընդունել է օրենքում անհրաժեշտ փոփոխությունը:

- Այդպիսով, Բունդեսվերը մոտ ապագայում կդառնա ամենախոշոր բանակը ՆԱՏՕ-ի եվրոպական դաշնակիցներին թվում: Խոսքը մեր երկրի անվտանգությանը, մեր դաշինքի գործընկերների անվտանգությանը եւ արդյունավետ ու առաջադեմ Բունդեսվերի մասին է,- նշեց Շոլցը:

ՎՐԱՍԱՆ - ԱՄՆ

ՎՐԱՑ-ԱՄԵՐԻԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄ

Հունիսի 17-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ ԱՄՆ պետքարտուղարի՝ Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով օգնական Կարեն Դոնֆրիդի հետ:

Հանդիպմանը քննարկվեցին Վրաստանին ԱՄՆ-ի աջակցության, երկու երկրների ռազմավարական գործընկերության եւ եվրոպական ու եվրատլանտյան կառույցներին ինտեգրման հարցերը:

Կառավարության ղեկավարը նշեց, որ պետքարտուղարի օգնականի այցը Վրաստանին ԱՄՆ-ի անսասան աջակցության եւս մեկ հստակ ուղերձ է, եւ երկիրը հատկապես բարձր է գնահատում այդ: Նրա խոսքով, Վրաստանը կա եւ մնում է ԱՄՆ-

ի ամենահուսալի ու հավատարիմ դաշնակիցը ինչպես տարածաշրջանում, այնպես էլ՝ նրա սահմաններից դուրս:

Հանդիպմանը ամերիկյան կողմը վերահաստատեց Վրաստանի տարածքային ամբողջականությանն ու ինքնիշխանությանը, ինչպես նաեւ՝ եվրոպական եւ եվրատլանտյան նկրտումներին Միացյալ Նահանգների անսասան եւ հաստատուն աջակցությունը: Կողմերը քննարկեցին նաեւ Ուկրաինայում շարունակվող ռազմական գոր-

ծողությունները, տարածաշրջանում տիրող իրավիճակը եւ Վրաստանի կարելու դերը տարածաշրջանում խաղաղության ու կայունության ապահովման գործում:



ծողությունները, տարածաշրջանում տիրող իրավիճակը եւ Վրաստանի կարելու դերը տարածաշրջանում խաղաղության ու կայունության ապահովման գործում:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «2008 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆԽԱՐԶԸ ՀԱՄԱՐԺԵՔ ԶԱՐԶԱԳԱՆՔԵՅ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԵՐԽՈՒԺՄԱՆ ՓԱՍՏԻՆ»

(Սկզբը՝ 1-ին էջում)

Բոլորովին վերջերս՝ 2022 թվականին, մենք տեսանք Ռուսաստանի կողմից Ուկրաինա լայնածավալ ներխուժումը: Ձեր հարցին, թե որտե՞ղ է գտնվում Վրաստանը ներկա իրավիճակում, հաշվի առնելով, որ Վրաստանը բռնազավթված է, եւ մենք ապրում ենք մեր տարածքում ռուսական զորքերի հետ, կոպիտ ասած, խոցելի ենք այս իրավիճակում:

Իհարկե, մտահոգված ենք մեր ազգի անվտանգության համար: Քաղաքական առումով, իհարկե, մենք աջակցում ենք Ուկրաինային բոլոր միջազգային հարթակներում, միացել ենք ՄԱԿ-ին, ԵԱՀԿ-ին, 260

բանաձեւերին: Մենք միջազգային, ֆինանսական, գլոբալ համակարգերի անդամ ենք եւ դրա վառ օրինակն այն է, որ արձագանքը համարժեք է եղել,- ընդգծեց Իրակլի Ղարիբաշվիլին:

ՌՈՒՄ - ՌԻԿՐԱԻՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱՐՈՒԹՅՈՒՆ. 121-ՐԴ ՕՐ

ՆՇՎԵՑ ՌԻԿՐԱԻՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Հունիսի 21-ին, Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցը, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը եւ Իտալիայի վարչապետ Մարիո Դրագիին, այցով գտնվում էին Ուկրաինայում, որտեղ հանդիպում ունեցան երկրի նախագահ Վլադիմիր Զելենսկու հետ: Բանակցությունների հիմնական թեման Ուկրաինայի շուրջ ներկայիս իրադրությունն էր:

Եվրոպական երկրների առաջնորդները ընդգծեցին Ուկրաինային աջակցության պատրաստակամությունը, խոսեցին Ուկրաինային Եվրամիության անդամի կարգավիճակ շնորհելու մասին: Միաժամանակ նշվեց, որ Եվրամիության երկրները հնարավորինս օգնում են Ուկրաինային սպառազինության հարցով, թեեւ ոչ նախկին ծավալներով ու տեսակներով:

Քաղաքական մեկնաբանների կարծիքով, Մակրոնի, Շոլցի եւ Դրագիի կողմից այդ քայլը գնահատվել է՝ որպես «զուտ խորհրդանշական», Եվ-

րոպայի կառավարություններում կուտակվում է «հոգնածություն Ուկրաինայից» այն պատճառով, որ պատժամիջոցային ճնշումը, որը նրանք հարկադրված էին գործադրելու Ռուսաստանի վրա, խփում է հենց իրենց: Հենց դրանով է պայմանավորված, որ եվրոպական երեք խոշոր պետությունների ղեկավարների կողմից Կիեւը այդպես էլ չստացավ ռազմական մատակարարումների արագացման երաշխիքներ:

Պատերազմի սկզբից ի վեր՝ Ուկրաինայում սպանվել է մինչեւ 10 հազար ուկրաինացի զինծառայող,- ասել է Ուկրաինայի նախագահի աշխատակազմի խորհրդական Ալեքսեյ Արեստովիչը:

Նրա խոսքով, վիրավորների թիվը հասնում է 30 հազարի, սակայն, ըստ Արեստովիչի, վիրավորների 96-98

տոկոսը կրկին վերադառնում է բանակ: Հատկանշական է, որ ռուսական կողմն իր կորուստների մասին հայտարարել է ընդամենը երկու անգամ: Վերջին մարտի 25-ի դրությամբ, զոհվել է ընդամենը 1351 մարդ, վիրավորվել՝ 3825-ը:

Միացյալ Թագավորության հետախուզական ծառայության տվյալներով, մայիսի վերջին Ռուսաստանը Ուկրաինայում կորցրել է մինչեւ 15 000 զինվորական:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐԴԵՆ ՄՊԱՆՎԵԼ Է 10 ՀԱԶԱՐ ՌԻԿՐԱԻՆԱՅԻ, 1351 ՌՈՒՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ

Պատերազմի սկզբից ի վեր՝ Ուկրաինայում սպանվել է մինչեւ 10 հազար ուկրաինացի զինծառայող,- ասել է Ուկրաինայի նախագահի աշխատակազմի խորհրդական Ալեքսեյ Արեստովիչը:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԶԲԻՑ ՌԻԿՐԱԻՆԱՅԻՑ ՀԵՌԱՑԵԼ Է ԱՎԵԼԻ ՔԱՆ 5 ՄԻԼԻՈՆ ՄԱՐԴ

Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին հայտարարեց, որ պատերազմական գործողություններից ի վեր Ուկրաինայի ավելի քան 5 միլիոն քաղաքացիներ են լքել երկիրը:

- Այդ ժամանակամիջոցում ավելի քան 5 միլիոն ուկրաինացիներ հարկադրված են եղել լքել իրենց տները եւ մեկնել արտասահման,- նշեց Ուկրաինայի նախագահը:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՄԱԺՈՂՎ

ՎՐԱՍԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՅՑԸ ՔԱԹԱՐ

Հունիսի 21-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Գաբրիաշվիլին Քաթարում մասնակցեց բարձր մակարդակի տնտեսական համաժողովին:

Այցի շրջանակներում՝ Վրաստանի վարչապետը հանդիպեց Կատարի էմիր շեյխ Թամիմ բեն Համադ բեն Խալիֆա Ալ Թանիի, երկրի վարչապետ ու ներքին գործերի նախարար շեյխ Խալիդ բին Խալիֆա բին Աբդու Ազիզ Ալ-Թանի, Պետության Գործարար ասոցիացիայի նախագահ Շեյխ Ֆեյսալ բեն Քասիմ Ալ Թանիի հետ, ինչ-

պես նաև՝ Ղազախստանի նախագահ Կասիմ-ժոմարտ Տոկաեվի հետ:


Քաթարի ղեկավարների հետ հանդիպումների ընթացքում կողմերը քննարկեցին երկու երկրների միջև առկա դիվանագիտական եւ տնտեսական համագործակցությունը, մասնավորապես, Քաթարի պետության հետ առեւտրատնտեսական հարաբերու-

թյունների խորացումը, որը տնտեսական դիվանագիտության օրակարգի առաջնահերթությունն է: Նշվեց, որ վերջին տարիներին երկու երկրների միջև տեղի են ունեցել բարձր մակարդակի կարելուր այցեր տարբեր ուղղություններով, ինչը դրական ազդեցություն է ունեցել Վրաստանի եւ Քաթարի միջև հետագա մերձեցման ու համագործակցության խորացման տեսանկյունից:

Կողմերը պատրաստակամություն հայտնեցին զար-

գացնել առկա սերտ եւ բարեկամական կապեր բոլոր ոլորտներում:

Հանդիպումների արդյունքում Վրաստանի կառավարության եւ Քաթարի կառավարության միջև ստորագրվեց երկու համաձայնագիր՝ ներդրումների փոխադարձ խրախուսման եւ պաշտպանության, Վրաստանի կառավարության եւ Քաթարի կառավարության միջև տնտեսական, առեւտրատնտեսական համագործակցության վերաբերյալ:



COVID - 19 616 ՎԱՐԱԿԱՆ ԵՎ 1 ՄԱՐԿԱՆ ԴԵՊՔ՝ ՄԵԿ ՇԱԲԱԹՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Անցած շաբաթվա ընթացքում Վրաստանում գրանցվել է կորոնավիրուսով վարակման 616 նոր դեպք: Առողջացել է 482 մարդ, իսկ 1 բուժառու մահացել է: Այս մասին տեղեկությունը տարածում է Վրաստանի Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնը: Վարակվածների մոտ հիմնականում գերակշռում է օմիկրոնի B.A.2 շտամը:

Մեկ շաբաթվա ընթացքում Վրաստանում 78 հազար 650 թեստավորում է կատարվել, այդ թվում՝ արագ հակազենային՝ 72 494 եւ ՊՇՈՒ՝ 6 հազար 156 թեստ:

7-օրյա թեստավորման դրական ցուցանիշը կազմում է 0,78 տոկոս:

ԲԵՌՆԱՏԱՐՆԵՐԻ ՏԱՐԱՆՑՄԱՆ ԱՐԺԵՔՆ ԱՎԵԼԱՑՎԵԼ Է 75 ՏՈԿՈՍՈՎ

Վրաստանի կառավարությունը որոշում է ընդունել բեռնատարների տարանցման ժամանակ ճանապարհներից օգտվելու արժեքը 200-ից մինչև 350 լարի բարձրացնելու մասին: Տուրքի վճարումից ազատվում են այն ավտոմեքենաները, որոնք բեռի փոխադրում են իրականացնում ծովային նավահանգստից մինչև մաքսային վերահսկողության մերձակա գոտի՝ 10 կիլոմետր հեռավորության վրա եւ հետադարձ ուղղությամբ:

Նշենք, որ օրական ավելի քան 900 բեռնատար ավտոմեքենա է կտրում-անցնում Վրաստանը: 2021 թվականին Վրաստանի միջանցքից օգտվել է 332 հազար բեռնատար, որոնք 66,4 միլիոն լարի (շուրջ 23 միլիոն դոլար) են վճարել պետական գանձարան: Ավելի քան 88 հազար բեռնատար ավտոմեքենա է բեռ փոխադրել Հայաստան, 66 367-ը՝ Ադրբեյջան, 41 425-ը՝ Թուրքիա:

ՄՈՑԻԱԼԱԿԱՆ

ԸՍՏ BusinessPressMedia-ի, ՎԱՎԵՐԱՑՎԵԼ Է ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՌԱԿԻ ԹԱՆԿԱՑՈՒՄ

«Հասարակություն եւ բանկեր» հասարակական կազմակերպության սպառողական ապրանքների շուկայի հետազոտության համաձայն, պարենային ապրանքների գները, 2017 թվականից ի վեր, բարձրացել են 3 անգամ:

Հետազոտության համաձայն՝ այն էապես ավելացել է տնային տնտեսությունների պարենային եւ սպառողական ծախսերում, տեսակարար կշիռը 2020 թվականին հասել է 47 տոկոսի:

«Տնային տնտեսությունների ծախսերի աճը պայմանավորված է պարենային ապրանքների գների բարձր աճով:

Հաշվի առնելով գնաճի թիրախը, սպառողական գների ինդեքսը 2015 թվականից մինչ օրս չպետք է բարձրանար 20 տոկոսից ավելի, սակայն գները կտրուկ աճել են ինչպես պարենային, այնպես էլ սպառողական այլ ապրանքների»,- ասված է հետազոտության մեջ:

Ըստ հետազոտության, վերջին տա-

րիներին նկատված բարձր գնաճի պատճառով, գների կտրուկ աճը նվազեցրել է բնակչության գնողունակությունը: Գների աճի վրա մեծ ազդեցություն ունեն կառավարության սահմանած հարկերը:

Թանկացման վրա մեծ ազդեցություն ունեն նավթամթերքի, ինչպես նաև ծխախոտի ու ալկոհոլի վրա կառավարության սահմանած հարկերը: Ծխախոտի եւ ոգելից խմիչքների վրա ծախսերը միջինում կազմում են, համապատասխանաբար, 10 եւ 4 տոկոս:

ԻՆՉ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ` ՀԱՅԻ ԳԻՆԸ ԿԱՎԵԼԱՆԱ՛, ԹԵ՛ ՔԱՇԸ ԿՊԱԿԱՍԻ

Վրաստանի հաց արտադրողների ասոցիացիայի ղեկավար Մալխազ Դոլիձեի խոսքով, շատ ընկերություններ, մոտ մեկ ամսվա ընթացքում, հացը թանկացրել են 10 թերթով:

Ինչպես նշել է ասոցիացիայի ղեկավարը, ոմանք դա արտադրել են հացի քաշով, ոմանք էլ՝ գնով:

Դոլիձեն ասել է, որ վերջին շրջանում Ռուսաստանից ներկրվող ալյուրը թանկացել է 7-8 լարիով:

- Շուկայում դեֆիցիտ չկա: Իմ տեղեկություններով՝ արդեն քիչ քանակությամբ ցորեն եւ ալյուր է ներկրվում: Այնուամենայնիվ, գները շատ բարձր են: Օրինակ՝ ալյուրը, որը նախկինում արժեք 68-69 լարի, այժմ արժե 77 լարի: Խոսքը առաջին կարգի ալյուրի մասին է, որով թխվում է հացը: Ամենաբարձր

որակի ալյուրն արժե ավելի քան 85 լարի,- ասել է Դոլիձեն:

Դոլիձեն նշել է, երբ Ռուսաստանում ալյուր վաճառողները պարզեցին, որ Վրաստանում գործարարները չեն աշխատում, եւ այլընտրանք չկա, գները կտրուկ բարձրացան:

Ասոցիացիայի ղեկավարն ասել է նաև, չնայած հուլիսի 1-ից նախատեսված գազի առեւտրային սակագնի կտրուկ բարձրացման, հույս ունի, որ մայրաքաղաքում էլ արտոնություններ կսահմանվեն հացի ու հացաբուլկեղենի արտադրությունների համար:

ՏԱՐԱԾԱՆԵՐԶԱՆ

ԳԱՆՁԱՅԻ ԴԱՉԱՐՅԱՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԸ ՎՐԱՍԱՆՈՒՄ ՏԱՍԵՉՈՐՍԵՐՈՐԳ ԶԱՎԱԿԻ ԾՆՈՒԵՂՈՎ ՍԱՀՄԱՆՈՒՄ Է ՆՈՐ ՌԵԿՈՐԴ

Նիոնոմինդայի մունիցիպալիտետի Գանձա գյուղի նորածին Դանիելը, ծնվել է հունիսի 21-ին, 2 կգ 600 գրամ քաշով եւ 48 սմ հասակով:

Առաջին հայացքից արտասովոր ոչինչ չկա... Թերեւս այդպես էլ լինել, եթե նորածինը նոր ձեկորդ չսահմաններ նորանկախ Վրաստանի պատմության մեջ: Այո՛, Դանիելը Վարդուհի է Սեդրակ Ղազարյանների տասնչորսերորդ զավակն է: Ու ավելին՝ դեռ տասնչորսերորդ, որովհետեւ 42-ամյա Վարդուհին վստահեցնում է, թե Աստված տա, նորից կծննդաբերի, իսկ Ախալքալաքի «Եվեթի հոսպիտալի» կլինիկական տնօրեն, բժիշկ-գինեկոլոգ Հայկանուշ Գոգորյանը ուրախությամբ փաստում, որ Վարդուհին բացառիկ առողջություն էւ այսօր էլ վերարտադրողականության բարձր կարողություն ունի:

Ուստի, առաջնորդվելով ներկայով, ասենք, որ այս պահին Ղազարյանների ընտանիքն ունի 8 որդի եւ 6 դուստր: Ամենամավազը՝ Հակոբը, 23 տարեկան է, սովորում է Երեւանի պետական համալսարանի աշխարհագրության եւ երկրաբանության ֆակուլտետում: Իսկ Անգելինան, ով նախքան Դանիելի ծնունդը ամենակրտսերն էր, 1 տարեկան

4 ամսական է:

Ղազարյանների ընտանիքի՝ յոթ չէ տասնչորս հոգով սեղան նստելու, ֆուտբոլի թիմի 11 անդամից ավելին ու Վրաստանի մերօրյա հայկական դպրոցի մի ամբողջ դասարանն ապահովելու ձեկորդի մասին, այսօր խոսում ենք ոչ միայն մենք, այլեւ ողջ Վրաստանը: Ըստ ժողովրդագրագետ (դեմոգրաֆ), պրոֆեսոր Ամիրան Թոթաձեի, վերջին երեսուց տարիների ընթացքում Վարդուհին գերազանցեց ամցած տարի տասներեքերորդ երեխային ծննդաբերող մայրիկի ձեկորդը:

Դանիելի ծնունդը տոն է բերել նաեւ Ախալքալաքի ծննդատուն, քանի որ Նիոնոմինդայում, ցավոք, ծննդատուն չի գործում:

«Վրաստան» թերթը սիրով միանում է Ղազարյանների ընտանիքին ուղղված բարեմաղթանքներին, թո՛ղ որ Դանիելը, մեր բոլոր երեխաները մեծանան առողջ, ուժեղ ու երջանիկ խաղաղ ու զարգացող երկրում:

ԳԱՅԱՆԵ ՔՈՍԱՆԱՅՅԱՆ

ԱԽԱԼՑԻԽԵՆՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՉՐԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Հունիսի 6-ին Ախալցխիսի քաղաքապետարանում կայացավ հանդիպում, որի նպատակը սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց զբաղվածության հարցի կարգավորումն էր: Ախալցխիսի փոխքաղաքապետ Ռուբեն Կարապետյանի, մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի ղեկավար Էլենե Գոգոլաձեի եւ «Հասարակական արահետ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Մարինե Սուրաձեի մասնակցությամբ անցկացված հանդիպմանը՝ տարածքային միավորների լիազորներին ներկայացվեցին սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց զբաղվածության մակարդակի բարձրացման նախագծի մանրամասներն ու իրականացվելիք ակտի-



վությունները: Նշենք, որ վերոնշյալ ծրագիրը, Սլովակյան «TELENET» կազմակերպության ֆինանսական աջակցությամբ, իրականացնելու է «Հասարակական արահետ» կազմակերպությունը:

ՄԱՌՆԵՈՒԼԻ ԸՆԴՈՒՄՅԱՆ ԱՎԱՆՈՒՄ, 30-ԱՄՅԱ ԸՆԴՄԻՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ, ՆՈՐԻՑ ԿԳՈՐԾԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Մառնեուլի մունիցիպալիտետի Շահունյան ավանում, 30 տարեկա դարդից հետո, լայնածավալ վերականգնման աշխատանքների արդյունքում շահագործման է հանձնվել ոռոգման համակարգը:

Իրականացվող ծրագրի արդյունքում վերականգնված ոռոգման համակարգով կոռոզվեն ավելի քան 1 000 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողեր: Ծրագրի արժեքը կազմել է 3,8 մլն լարի:

Նոր համակարգի գործարկման կապակցությամբ, Մառնեուլիում էր գտնվում Վրաստանի շրջակա միջավայրի եւ գյուղատնտեսության նախարար Օթար Շանուգիան: Նա, Զվենո Քարթլիի տարածաշրջանում պետական լիազորմա-

հանգապետ Գիորգի Դոխտուրիշվիլու, Վրաստանի խորհրդարանի Մառնեուլիի եւ Գարդաբանի մեծամասնական պատգամավոր Զաուր Դարգալիի, Մառնեուլիի քաղաքապետ Քեման Օմարովի եւ այլ պաշտոնյաների հետ, ծանոթացավ նեկուլտիվացիոն օբյեկտներում ընթացող աշխատանքների արդյունքներին եւ հանդիպեց բնակչության հետ:

ՏԱՐԵՐ

ՄԵԼԵՈՆ ՄԱԿԱՐՅԱՆ. «ՏԱՐԵՑՆԵՐՆ ԱՆԳԱՄ ՉԵՆ ՀԻՇՈՒՄ ՆՄԱՆ ԿԱՐԿՈՒՄ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ»

ԻՆՉՈՒՒ ԵՆ ՏԵՂԻ ՖԵՐՄԵՐՆԵՐԸ ԽՈՒՍԱԾՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ԱՂԱՆՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ



Տեղի ունեցածի առիթով «Վրաստան» կապվեց Ախալքալաքի մունիցիպալիտետի քաղաքապետ Մելքոն Մակարյանի հետ, խնդրելով մանրամասնել իրադրությունը:

- Գունիսի 21-ին, Ախալքալաքիում եւ հարակից գյուղերում, ժամը 19:46-ի սահմաններում, մոտ 2-3 բուսի տեսած ուժեղ կարկուտի վնասները դեռեւս դժվար է հաշվարկել ու գնահատել: Մեր տարեցներն անգամ չեն հիշում նման կակուտ Ախալքալաքիում: Ընդհանուր առմամբ՝ վնաս է հասցվել շրջակայքում գնվողական ավանի բազմաթիվ շենքին, որի ազդեցությամբ ֆերմը տանիքը վերածվել է ցանցի: Գյուղերում քամին պոկել-տարել է հիմնականում գյուղերի ծայրամասերում գտնվող տների տանիքների ծածկը: Հենց հաջորդ օրը քաղաքացիներից ստացել ենք դիմումներ վնասված տանիքների, փշրված ապակիների մասին: Հիմնականում տուժել են քաղաքի հարակից տարածքները՝ Դիլիսկա, Խուլզում, Գոման, Մաջադիա գյուղերը եւ այլն,- մեզ հետ զրույցում ասաց Մելքոն Մակարյանը՝ հավելելով, որ քաղաքապետարանը օպերատիվ արձագանքում է բոլոր դիմումներին, բացատրագրերով եւ լուսանկարներով տեղեկատվությունը անմիջապես ուղարկվում է թերխիսի գյուղատնտեսության եւ տարածաշրջանային զարգացման ու ենթակառուցների նախարարություններ:

- Բնականաբար, տեղական ինքնակա-

Հունիսի 21-ին Ախալքալաքի մունիցիպալիտետի շրջակայքում եւ հարակից տարածքում տեղացած կարկուտը լուրջ վնաս է հասցրել գյուղատնտեսական հողահանդակներին, բնակելի տներին: Հատկապես տուժել են Ախալքալաքի նախկին զինվորական ավանը, ինչպես նաեւ Դիլիսկա, Խուլզում, Կուլիկամ, Գոման, Մաջադիա, Օլավերդի գյուղերը:

Հունիսի 22-ին Ախալքալաքի մունիցիպալիտետի քաղաքապետարանը, տնտեսություններին հասցրած վնասի փոխհատուցման հարցով, ստացել է տասնյակ դիմումներ, ընդ որում, դիմումներն առնչվում են ոչ միայն տարերջից տուժած բերքի, այլեւ առանձին տների կտուրների վնասի փոխհատուցմանը:

Ստացված տեղեկության համաձայն, օրինակ՝ Կուլիկամ եւ Խուլզում գյուղերում կարտոֆիլի ցանքատարածությունները գետնին են հավասարվել: Հողին հավասարեցված կարտոֆիլի դաշտերի, վնասված հացահատիկային, բանջարոտանային մշակաբույսերի, մրգատու ծառերի մասին տեղեկություններ են ստացվել նաեւ Դիլիսկա, Գոման եւ Օլավերդի գյուղերից:

ռավարման մարմնի եւ կենտոնական գերատեսչությունների ներկայացուցիչներից կկազմվի հատուկ հանձնաժողով, որն էլ կգնահատի առանձին տնտեսություններին եւ բնակելի տներին ու ենթակառուցներին հասցրած վնասի չափը: Այդ տեղեկատվությունն էլ կուղարկենք համապատասխան կենտրոնական գերատեսչություններ: Ցավոք, քաղաքապետարանը, ներկա դրությամբ, ավելին անելու հնարավորություն չունի: Մունիցիպալային բյուջեում նման դեպքերի համար նախատեսված գումարը կազմում է ընդամենը 200 հազար լարի: Չմոռանք, ծանապարհների մաքրման, մեքենաների երթուղիների մաքրման համար, այդ գումարից 60 հազարն արդեն ծախսվել է,- նշեց Ախալքալաքի քաղաքապետը՝ հավելելով, որ վնասի վերաբերյալ դիմումները կընդունվեն նաեւ առաջիկա մի քանի օրերի ընթացքում:

- Մենք կապվել ենք գյուղերում քաղաքապետարանի բոլոր 13 լիազորների հետ, ճշտել վնասի բնույթը, թե որի փոխհատուցումն է ներառված տեղական իշխանության իրավասությունում եւ, որն է իրականացվելու կենտրոնական գերատեսչությունների, մասնավորապես, գյուղատնտեսության նախարարության կամ տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցների նախարարության կողմից,- ասաց Ախալքալաքի քաղաքապետը:

Հարցին, թե ախալքալաքի ֆերմերները գրեթե ամեն տարի կրկնվող տարերքի եւ պետության կողմից տուբիդալորիզող գյուղատնտեսական ապահովագրության պայմաններում, ինչո՞ւ չեն ապահովագրում իրենց հողատարածքներն ու բերքը, Մելքոն Մակարյանը նշեց, որ, ամենայն հավանականությամբ, տեղի ֆերմեր-

ների մոտ գյուղատնտեսական ապահովագրության վերաբերյալ տեղեկատվությունը թյուր է կամ ոչ բավարար, ինչը, երեւի, նրանց շրջանում անվստահություն է առաջացնում գործընթացի վերաբերյալ:

- Երբ ութ տարի առաջ ներդրվեց գյուղատնտեսական ապահովագրությունը, սկզբնական փուլում բավական թվով ֆերմերներ ապահովագրեցին իրենց տարածքները, թեւ, տարերային նման աղետից հետո, այդ հարցով պատասխանատու անձինք սխալ հաշվարկներ էին կատարել, ինչն էլ հանգեցրեց հիասթափության: Չգանկանալու պատճառներից են, հավանաբար, նաեւ ապահովագրական ընկերությունների նկատմամբ անվստահությունը, ապահովագրության համար գումարի բացակայությունը, գրանցման բացակայությունը եւ այլն: Այսօրվա դրությամբ, Ախալքալաքի մունիցիպալիտետում գյուղատնտեսական ապահովագրության մակադակը, ցավոք, շատ ցածր է:

Քաղաքապետի հետ համակարծիք է նաեւ Ախալքալաքի մունիցիպալիտետի սակրեբուլոյի պատգամավոր Համլետ Մովսիսյանը: Նրա խոսքով, կարկուտն այնքան ուժեղ էր եւ այնպիսի մեծությամբ, որ ավերել է ոչ միայն դաշտերը, այլեւ տներն ու ավտոմեքենաները: Պատգամավորի խոսքով, ցավոք, մեր գյուղում ոչ ոք իր բերքը չի ապահովագրել:

- Ընդամենը մեկ անգամ ապահովագրեցին ու հիասթափվեցին: Միայն էին գնահատել եւ մարդիկ այժմ չեն ուզում, չեն վստահում: Իմ բերքն էլ, որը չեն ապահովագրել, 80 տոկոսով վնասվել է,- ասաց Համլետ Մովսիսյանը:

Վրաստանում գյուղատնտեսական ապահովագրությունը գործում է 2014 թվականից: Երկրի տարածքով գյուղատնտեսա-

կան ապահովագրության ոլորտում վեց ապահովագրական ընկերություններ են աշխատում՝ «Ալրագի»-ն, «Փրայմ»-ը, «Արդի»-ն, «Թիբիսի»-ն, «Նյու Վիժն»-ը, «Վրաստանի ապահովագրական խումբ»-ը:

Ցավոք, Ախալքալաքի մունիցիպալիտետում ապահովագրական ընկերությունները, որքան էլ տարօրինակ լինի, այնքան էլ ակտիվություն չեն ցուցաբերում, տեղեկատվական արշավներ չեն անցկացնում, բոլոր ընկերությունները չեն, որ Ախալքալաքիում ունեն իրենց նեկայացուցչությունները (2015 թվականից Ախալքալաքիում գրասենյակ ունի միայն «Ալրագի» ընկերությունը: «Նյու Վիժն» ապահովագրություն»-ը Ախալքալաքիում գրասենյակ բացեց բառացիորեն երկու օր առաջ): Արդյունքում ապահովագրության ցածր մակարդակ է:

Նշենք նաեւ, որ բերքի ապահովագրությունը պետական ծրագիր է: Ապահովագրության գումարից պետությունը ապահովագրական ընկերությանը վճարում է 70 տոկոսը, իսկ 30 տոկոսը վճարում է հողի սեփականատերը: Մեկ հեկտար կարտոֆիլի դաշտի ընդհանուր ապահովագրական գումարը կազմում է 1275 լարի, որից 382,50 լարին վճարում է գյուղացին, իսկ 892,50 լարին՝ պետությունը: Ըստ ապահովագրական կանոնակարգի՝ 1 հա կարտոֆիլի դաշտի 100 տոկոսով վնասի դեպքում կարելի է ստանալ 15 000 լարի: Այս գումարը հաշվարկված է՝ 1 կգ կարտոֆիլի 0,60 թեթի արժեքի եւ 25 000 կգ/հա բերքատվության դեպքում:

Ընդ որում, Ախալքալաքիում բերքն ապահովագրվում էր կարկուտահարությունից, ջրհեղեղներից, աշմանային ցրտահարություններից եւ փոթորկից:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ՀԱՆՐԱՅԱՎԱՔ

«ՏՈՒՆ՝ ԴԵՊԻ ԵՎՐՈՊԱ». ԵՎՐԱԽՆՏԵԳՐՄԱՆ ԿՈՒՐՍԻ ԱԿՆԱՅՑ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

(Այկաթը՝ 1-ին էջում)

հաշվի առնելով նաեւ, որ հունիսի 24-ին ԵՄ-ը կկայացնի իր վերջնական որոշումը՝ կապված Վրաստանին թեկնածուի կարգավիճակ շնորհելու հետ:

Հանրահավաքին մասնակցեցին քաղաքական կուսակցությունների ու հասարակական կազմակերպությունների անդամներ, ուսանողներ, դասախոսներ, տարբեր ոլորտների ներկայացուցիչներ:

Նշենք, որ հանրահավաքին ցույցի կազմակերպիչներն իրենց ելույթներում հայտարարեցին «Նոր ժողովրդական շարժում» հիմնելու նախաձեռնության մասին եւ հռչակեցին նոր շարժման մանիֆեստը:

ԻՐԱՎԼԻ ԿՈՐԱԽԻՉԵ. «ԱԶԳԱՅՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՅՍ ՀԱՆՐԱՅԱՎԱՔԸ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԱՆԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԷՐ ԵՆԹԱԴՐՈՒՄ»



ցել հանրահավաքի:

Վրաստանում իշխող «Վրացական երազանք» կուսակցության նախագահ Իրակլի Կորիսիչին արձագանքեց Ռուսթավելու պողոտայում տեղի ունեցած «Տուն դեպի Եվրոպա» հանրահավաքին եւ նշեց, որ երկրում կա եւս երեք միլիոն մարդ, ովքեր նույնպես կողմ են եվրաինտեգրմանը, սակայն չեն գնա-

Իրակլի Կորիսիչին խոսքով, հանրահավաքը կազմակերպեց «Միացյալ ազգային շարժումը», իսկ «Ամոթ է» շարժումը անվանեց ՄԱԸ-ի երիտասարդական թեւ, չնայած այն հանգամանքին, որ ՄԱԸ անդամներից ոչ մեկը ելույթ չի ունեցել հանրահավաքի ժամանակ: Ըստ Կորիսիչինի, հանրահավաքի կազմակերպիչների ուղերձները Բակուրիանիի ծրագրի շարունակությունն էին:

- Հանրահավաքը, իհարկե, կազմակերպել էին «Ազգային շարժումը» եւ «Ամոթ է»-ն, նրա երիտասարդական թեւը, եւ դա Բակուրիանիի ծրագրի շարունակությունն էր: Այս ծրագիրը կազմվել է Բակուրիանիում եւ սկսել իրագործվել, բայց այն դատապարտված է ծախողման: Բակուրիանիի հավաքի մասնակիցները շատ լավ էին հաշվարկել, որ թեկնածուի կարգավիճակ կստանան երկու երկրները, այլ ոչ թե Վրաստանը, ինչ-ինչ պատճառներով պայմանավորված նրանք կանխավ իրագրվել էին,- ասաց Իրակլի Կորիսիչին եւ հավելեց, որ իրենց մտադրության համաձայն, պետք է հաջորդեին հանրահավաքներ, անկարգություններ, իսկ ծրագրի վերջնակետը՝ պատերազմն էր:

- Ցանկանում ենք հիշեցնել, որ եվրաինտեգրումը, գրված է Վրաստանի Սահմանադրության մեջ: Մենք շաբաթներ շարունակ շրջանառում ենք Սահմանադրության մեջ մեր գրած հոդվածը, որը չի քվեարկվել այս արմատական ընդդիմության ներկայացուցիչների կողմից,- հավելեց Իրակլի Կորիսիչին:

ԿԱՐԼ ՀԱՐՑԵԼ. «ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՉԵՆՔՈՒՄ Է»

Ըստ Վրաստանում ԵՄ դեսպան Կարլ Հարցելի՝ հու-

նիսի 20-ի ցույցը արժանապատիվ է խաղաղ էր:

- Այն, ինչ լսեցի, վրաց ժողովրդի ցանկությունն է, որ Վրաստանը օգուտի պահից եւ բաց չթողնի Եվրամիության ընդունած հնարավորությունները,- ասաց Կարլ Հարցելը՝ հավելելով, որ Վրաստանի եվրոպական դիրքորոշումը Վրաստանի ձեռքում է:

- Եթե Եվրամիության անդամ երկրների եզրակացությունը նույնն է, ինչ Եվրահանձնաժողովին, ապա ուղերձը շատ պարզ է՝ Վրաստանի եվրոպական դիրքորոշումը Վրաստանի ձեռքում է, եւ ժամանակն է ջանասիրաբար աշխատել ու առաջ շարժվել եվրոպական օրակարգի ուղղությամբ,- ասաց Վրաստանում Եվրամիության դեսպանը:

ԸՍՏ NETGAZETI-Ի, ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐԸ ԳՐԱՎԵԼ ԷՆ ՌՈՒՄԹԱՎԵԼՈՒ ԴՈՂՈՏԱԼ

«Տուն դեպի Եվրոպա» հանրահավաքին, ըստ Netgazeti-ի պարբերականի, ցուցարարների թիվը հասել է 100 հազարի:

Netgazeti-ն կիրառել է մի մեթոդ, որը երկար տարիներ կիրառվում է բազմաթիվ միջազգային լրատվամիջոցների կողմից: Մեթոդը ենթադրում է՝ ճշգրիտ չափել այն տարածքը, որի ծավալով անց է կացվել հանրահավաքը: Նշվում է, որ ցույցի մասնակիցները կանգնած են եղել Ռուսթավելու պողոտայի երկայնքով: